

ԳԻՏՆԱԿԱՆՆ ՈՒ ՄԱՆԿԱՎԱՐԺԸ

Հոգևոր, գրական-մշակութային գործունեության բեղմնավոր ուղի է անցել Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Ա-ը: Պատահականության բերումով էր, թե ճակատագրի թելադրանքով, կուսակրոն քահանա ձեռնադրելիս Դպրեվանքի շրջանավարտ Նշան Սարգսյանին ընծայվեց նոր վախճանված Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Գարեգին Հովսեփյանի անունը: Որևէ մեկի մտքով անցնո՞ւմ էր արդյոք, որ երիտասարդ կրոնավորը դառնալու էր նշանավոր հոգևորականի ու հայագետի արժանավոր ժառանգորդը: Բազում շնորհներով օժտված երիտասարդ վարդապետը շատ շուտ զգացնել տվեց իրեն, եռանդուն և նպատակասլաց գործունեությամբ համընդհանուր ճանաչման ու հարգանքի արժանացավ ոչ միայն հայկական, այլև միջեկեղեցական շրջաններում: Միջազգային վիթխարի հեղինակություն վայելող եկեղեցական գործիչ է Հայոց Վեհափառը: Հասարակական-վարչական գործունեությանը զուգընթաց, իր նշանավոր անվանակցի նման, որի կերպարն ու «մշտադալար յիշատակը» մշտապես ուղեկցում են նրան, զբաղվել է գիտական-մանկավարժական գործունեությամբ: Չորս տասնյակից ավելի գրքեր ու գրքույկներ, հարյուրավոր ուսումնասիրություններ ու հոդվածներ, տարբեր լեզուներով անհամար զեկուցումներ ու ելույթներ,— քչերը կարող են հպարտանալ նման վաստակով: Զմոռանանք նրա արգասավոր գործունեության բնորոշ յուրահատկությունը. ուր էլ եղել է Գարեգին Երկրորդը, Դպրեվանքում՝ իբրև տեսուչ ու դասախոս, Իրանում, Հյուսիսային Ամերիկայում՝ իբրև թեմի առաջնորդ, թե Լիբանանում՝ իբրև Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս, ոչ միայն արարել է ինքը, այլև ստեղծել է աշխատելու, գիտական-մանկավարժական գործունեությամբ զբաղվելու բարենպաստ պայմաններ, հիմնել է գիտական, մշակութային կենտրոններ, միություններ, հայագիտական դասընթացներ, այլ խոսքով՝ աշխատել և ստեղծել է ինքը, աշխատելու և ստեղծելու մղել ուրիշներին:

Մեծ աստվածաբան է Գարեգին Ա-ը, հայ և միջազգային Եկեղեցու պատմության ճանաչված գիտակ: Նրա հետաքրքրությունները ներառում են նաև հայոց պատմության ու մատենագրության, գրականության ու հրապարակախոսության, մշակույթի այլևայլ բնագավառներ: Մի դեպքում իբրև գիտնական-հետազոտող, մի այլ պարագայում՝ իբրև Ավետարանի ճշմարտությունները մատչելի եղանակներով ժողովրդին ուղղող քարոզիչ, հմտորեն օգտագործելով գրողի ու պերճախոսի իր անուրանալի ձիրքերը, ստեղծում է իր գրքերն ու ուսումնասիրությունները, նաև այս կերպ մշտապես կենդանի և անմիջական պահելով իր կապը ժողովրդի հետ, հաճախ՝ այլալեզու գիտնականների ու հավատացյալների հետ:

Վեհափառի աստվածաբանական լավագույն հետազոտություններից մեկը նվիրված է նշանավոր Քաղկեդոնի ժողովի որոշումների նկատմամբ Հայոց Եկեղեցու դիրքորոշման մանրազնին քննությանը: «Քաղկեդոնի ժողովը և Հայ Եկեղեցին» վերնագրված այս հետազոտությունը, որ Օքսֆորդի համալսարանում երկամյա ուսումնասիրության արդյունքն էր, ավարտաճառը, անգլերենով գրված լինելու և խնդրի սպառիչ պատասխանը ամփոփելու հանգամանքներով դուրս է գալիս Հայ Եկեղեցու պատմության շրջանակից՝ ստանալով միջազգային նշանակություն: Մինչև այսօր էլ աստվածաբանների, ընդհանրապես գիտնականների ուշադրության կենտրոնում է քաղկեդոնականության նկատմամբ Հայ Եկեղեցու վերաբերմունքի խնդիրը: Այս հարցը, սակայն, սովորաբար քննվել է այլ խնդիրների առնչությամբ՝ շատ հաճախ արժանանալով միակողմանի, սխալ, նույնիսկ թյուր ըմբռնումների: Առաջին անգամ հատուկ և ընդարձակ քննության առարկա է դառնում քաղկեդոնականության նկատմամբ Հայ Եկեղեցու դարերի ընթացքում դրսևորած վերաբերմունքը: Գիտնականի հմտությամբ, օգտագործելով հարուստ աղբյուրներ, ամբողջական պատկեր ստանալու համար քննությունը սկսելով հարցի նախապատմությունից՝ գիտնական աստվածաբանը հերքում է հայ և օտարազգի հեղինակների ձախ ու ծուռ ըմբռնումները (իբրև թե պարսիկները հայերին ապակողմնորոշել են, հայերը ի վիճակի չէին հասկանալու Քաղկեդոնի ժողովի որոշումները, կամ նրանց լեզուն չէր կարող արտահայտել աստվածաբանական բարդ ըմբռնումները և այլն), ամբողջացնում նախորդների ձեռքբերումները, հանգում նոր եզրակացությունների: Համոզիչ վերլուծություններով հաստատվում է, որ Քաղկեդոնի ժողովի նկատմամբ Հայ Եկեղեցու առաջնորդները ցուցաբերել են միանգամայն իմաստավորված, ազգի ինքնուրույնության ու հայրենիքի անկախությանը միտված քաղաքականություն:

Բոլորովին վերջերս Բեյրութում հրատարակվեց նրա աստվածաբանական մի ուրիշ աշխատություն՝ «Հայաստանեայց Եկեղեցին իր «ծառայական կերպ»ին մէջ» խորագրով, ուր, արդեն, ոչ թե գիտական խստիվ կանոններով, այլ հանրամատչելի շարադրանքով, քանի որ ուղղված է հավատացյալ (առաջին հերթին՝ հայրենաբնակ) լայն հասարակությանը, շարադրվում են Հայոց Եկեղեցու ծառայությունները ազգին ու մարդկությանը: Ընդգծելով հանդերձ «խորհրդային կարգերի եւ համայնավարական գաղափարախօսութեան ճնշիչ ու արգելակիչ» պայմաններում Մայր Եկեղեցու ծավալած ազգօգուտ գործունեությունը, գրքի խնդիրների ու նպատակի մասին «Յառաջաբան»-ում կարդում ենք. «...Պարզ ժողովրդի, մասնաւորապէս երիտասարդ սերունդների մօտ ստեղծուել է մի բաց, մի տեսակ ան-գիտութիւն, ան-հաղորդութիւն Հայց. Եկեղեցիով դարեր շարունակ արտայայտուած Քրիստոսի Աւետարանի, քրիստոնէական կրօնի գաղափարների, ճըշմարտութիւնների, բարոյական սկզբունքների, եկեղեցական ծէսերի եւ տօնների, դաւանական, վարդապետական կեցուածքների, մեր Եկեղեցու ծառայութիւնների, իրագործած արժէքների եւ ստեղծած աւանդութիւնների, մի խօսքով՝ Հայց. Եկեղեցու պատմական ժառանգութեան նկատմամբ»: Ահա այդ բացն է լրացնում Վեհափառի նոր գիրքը, որն, անտարակույս, կդառնա սեղանի գիրք:

Իր բազմաբեղուն գործունեության ընթացքում ունեցած բազում ապրումներ, խորհրդածություններ, մտորումներ, որոնք «օրուան հետ մայրամուտի չյանգեցան», դարձան պատմական, գրական, հրապարակախոսա-

կան էսսե ու նոթագրություն, քարոզ-խոսք ու հոդված, պատմվածք ու ճամփորդական ուղեգրություն, հուշ ու գրառում, որոնց միավորող ներքին կապը խոր ու անհանգիստ մտահոգությունն է հայրենիքի, հայ մարդու և նրա ստեղծած շքեղ մշակույթի հարատևումի հանդեպ: Ահա թե ինչու պատահական չէր նրանց մի մասի համախմբումը «Հող, մարդ և գիր» խորագրով հատորում: Հայոց պատմության, հայի ճակատագրի, հայ մշակույթի շուրջ «օրուան հետ մայրամուտի» չգնացող այս խոհերը, ո՛ր ժամանակներին էլ վերաբերեն, օժտված են արդիական շնչով ու հնչեղությամբ: Ահա, օրինակ, «Բանալիներ, բանալիներ Մայր Արաքսի» էսսեն. պատմության հավաստած մի փաստ՝ Շահ Աբասի մեծ գաղթի ժամանակ ջուղայեցիները եկեղեցիների ու իրենց տների բանալիները ի պահ տվին Մայր Արաքսին, առիթ է տալիս խորունկ մտորումների, իմաստավորված զուգահեռների, որոնք մերօրյա գաղթերն ու տեղահանություններն են հիշեցնում: Կարևորը, սակայն, վերադարձի ու վերածնունդի հավատն է, նախնիների հավատը, որ Վեհափառի շուրթերով փոխանցվում է նոր ժամանակների ջուղայեցիներին.

«Քնացէք հանդարտ, մինչեւ որ օր մը լսէք տէրերուն, իրենց որդւոց, որդւոց որդիներուն ձայները.

«Զարթիք նոր ժողովուրդ»:

Եւ այն ատեն՝

Բանալիներ, բանալիներ Մայր Արաքսի,

Ձեզմով բացուին «դռներն յուսոյ» ազգիս հայոց անջնջելի...»

Ժամանակների այս կապը բնորոշ է Վեհափառ Հայրապետի ստեղծագործություններին:

Նա մշտապես հավատարիմ է իր սկզբունքին՝ «պատմութիւնը անցեալի վերապրեցումն է մեր ներկայի կյանքի անդաստանների մէջ»:

Մեծ մանկավարժ է նաև Վեհափառը:

Եթե նույնիսկ շրջանցենք այն պարագան, որ հոգևոր առաջնորդը դերի ու կոչումի բերումով ուսուցիչ է արդեն, ամբողջ ազգի ուսուցիչ, նեղ մասնագիտական առումով ևս ծանրակշիռ է նրա վաստակը: Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսարանի Դպրեվանքի սանը տասնամյակներ շարունակ եղել է ուսումնական նույն հաստատության հսկիչ, տեսչի օգնական, տեսուչ, դասախոս, անտարակույս շարունակելու է մնալ նրա հովանավորը: Նրա ջանքերով դպրոցը տեղափոխվեց Պիքֆայա՝ նոր և հարմարավետ մի կառույց: Նորացավ ոչ միայն շենքը, այլև աստվածաբանության ուսուցումն ու կրոնական դաստիարակության մակարդակը. նրա գրչին է պատկանում «Հովուական աստվածաբանութեան ձեռնարկը» (1979):

Հմուտ տեսչի ու մանկավարժի աչքից չէին վրիպում անգամ «մանրուքները»: Վեհափառի ներշնչված ու ներշնչող դասախոսությունների մասին ոգևորությամբ խոսելուց հետո, նրա աշակերտներից մեկը հենց այնպես, ի միջի այլոց, ավելացրեց.

— Հաճախ էր այցելում մեր կացարանները, և վայ նրան, ում տեսներ պառկած կարդալիս...

Բարձրացրեց Դպրեվանքը, ինքն էլ բարձրացավ նրա հետ՝ իրավունք ունենալով հետագայում գրելու՝ «Ես Դպրեվանքով եղա և եմ այսօր ինչ որ եմ»: Եվ եթե այսօր Դպրեվանքը ոչ միայն ուսումնական, այլև գիտական նշանավոր կենտրոն է, մտավորական սերունդների դարբնոց, դրանում

անառարկելիորեն մեծ է Վեհափառի ներդրումը: Այստեղ ևս նա իր նշանավոր անվանակցի հետևորդն է:

Դպրեվանքում կրթությունն ու դաստիարակությունը առաջ է տարվում մեկ ազգ, մեկ Եկեղեցի սկզբունքով, ահա թե ինչու ուսումնական այս օջախում ձևավորված հոգևորականները հավասարապես ծառայում են և՛ Անթիլիասին, և՛ Էջմիածնին: Ավելին՝ դպրոցի նպատակը միայն հոգևորականներ դաստիարակելը չէ, զգալի թիվ են կազմում նաև աշխարհիկ գործիչները՝ կրթված այնպիսի ոգով, որ կարողանան առաջնորդել ժողովրդին «արդի մարդկային ընկերութեան եւ քաղաքակրթութեան տուեալներու համընթաց եւ՝ միանգամայն զօրացնեն հայակերտութեան շարունակական կենսընթացը Հայ ազգի ինքնօրէն եւ կենսունակ պահպանումին եւ զգացումին նուիրական եւ հրամայական պարտաւորութեան ճամբուն վրայ»:

Ավելի լավ չես ասի:

Համակողմանի հետաքրքրությունները հնարավորություն են տվել Վեհափառին աստվածաբանությունից բացի Բեյրութի և այլ քաղաքների ուսումնական հաստատություններում վարել պատմության, գրականության, հայագիտական այլ բնագավառների վերաբերյալ դասընթացներ: Կարելի է չտարակուսել, որ նույն եռանդով կշարունակի մանկավարժական գործունեությունը Էջմիածնի հոգևոր ճեմարանում և հայրենիքի այլ բուհերում:

ԳԱՌՆԻԿ ԱՆԱՆՅԱՆ